

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«_____» _____ 2016 թվականի N _____ Ն

**ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 730-Ն ՈՐՈՇՈՒՄՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N1112-Ն որոշման 6-րդ կետի 1-ին ենթակետի ա) մասի՝

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (տուն-ինտերնատների) գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի, կոմունալ, սանիտարա հիգիենիկ և հակահրդեհային անվտանգության պահպանման նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատներում)

խնամվողներին հատկացվող սննդամթերքի օրական օգտագործման նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում շահառուներին հատկացվող սննդամթերքի նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տուն-ինտերնատներում խնամվողներին հագուստով և անկողնային պարագաներով ապահովելու նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 4 հավելվածի.

5) տուն-ինտերնատներում խնամվողների խնամքի համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի օգտագործման նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 5 հավելվածի.

6) տնային պայմաններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 6 հավելվածի.

7) ընդհանուր տիպի տուն-ինտերնատում խնամվողների առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 7 հավելվածի.

8) հատուկ (մասնագիտացված) հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող խնամվողների առողջական և հոգեբանական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների նվազագույն չափորոշիչները՝ համաձայն N 8 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում մշակել և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել սույն որոշման 6-րդ, 7-րդ և 8-րդ հավելվածներով սահմանված՝ բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվողների տարբեր խմբերին՝ ըստ նրանց առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների գնահատման, մատուցվող ծառայությունների նվազագույն չափորոշիչները (այդ թվում՝ սննդի, հագուստի, սանիտարահիգիենիկ պարագաների և սպասարկող անձնակազմի հաստիքային միավորների):

3. Սահմանել որ՝

1) տուն-ինտերնատներում խնամվողների սննդի օրական սպառման նվազագույն էներգետիկ արժեքը չպետք է պակաս լինի 2100 կկալ-ից, ընդ որում, խնամվողներին տրվող սննդի օրական չափաքանակը պարտադիր պետք է պարունակի առնվազն 10-15 տոկոս սպիտակուց, 28-32 տոկոս ճարպ, 55-60 տոկոս ածխաջրատ.

2) բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններին հատկացվող և խնամվողների խնամքի և սոցիալական սպասարկման նպատակով անհրաժեշտ առանձին ապրանքատեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը.

3) տնային պայմաններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ տրամադրելու նպատակով իրականացվող տնային այցելությունների դիմաց համապատասխան մասնագետին և/կամ սոցիալական սպասարկողին յուրաքանչյուր այցելության համար վճարվում է 200 դրամ.

4) մինչև սույն որոշման 2-րդ կետով նախատեսված՝ խնամվողների գնահատված կարիքների հիման վրա մատուցվող ծառայությունների տարբերակված չափորոշիչների հաստատումը, շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվողների՝ սույն որոշման 7-րդ և 8-րդ հավելվածներով սահմանված խմբերին, ըստ նրանց գնահատված կարիքների, ծառայությունների տրամադրումը իրականացվում է սույն որոշմամբ հաստատված չափորոշիչներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1292-Ն որոշմամբ հաստատված հաստիքային միավորների շրջանակներում, վերջինիս մասով սահմանելով խնամվողների տարբեր խմբերին ծառայություններ տրամադրող մասնագետների աշխատանքային ծանրաբեռնվածությունը, աշխատանքային պարտականություններինների բաշխումը և ժամանակացույցը, անհրաժեշտության դեպքում, ծառայությունների տրամադրումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով, հաստատության ղեկավարը կարող է կատարել սպասարկող անձնակազմի անդամների ներքին տեղաշարժ:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N730-Ն որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նվազագույն չափորոշիչներ

բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (տուն-ինտերնատներ) գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի տարածքի, կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության պահպանման

1. Տուն-ինտերնատում խնամվողների սենյակների բնակելի մակերեսը չպետք է մեկ խնամվողի հաշվարկով պակաս լինի 5 քառ. մետրից, յուրաքանչյուր սենյակում պետք է բնակվի ոչ ավել, քան 4 խնամվող:

2. Յուրաքանչյուր խնամվող պետք է ապահովված լինի առանձին մահճակալով, մեկ փոքր պահարանով, մեկ աթոռով, յուրաքանչյուր 4 խնամվող՝ մեկ սեղանով և մեկ հանդերձապահարանով:

3. Տուն-ինտերնատը պետք է ապահովված լինի առանձին խոհանոցով և ճաշարահով՝ այն հաշվարկով, որ խնամվողները կարողանան ճաշել ոչ ավել, քան 2 հերթով:

4. Տուն-ինտերնատը պետք է ունենա լվացքատուն, լվացքը չորացնելու համար առանձին տարածք՝ յուրաքանչյուր մեկ խնամվողի հաշվարկով մեկ կգ հզորությամբ լվացքի մեքենա:

5. Տուն-ինտերնատը պետք է ունենա սանհանգույց՝ առավելագույնը յուրաքանչյուր 8 խնամվողին մեկ հատի հաշվարկով, և բաղնիք՝ առավելագույնը յուրաքանչյուր 40 խնամվողին մեկ ցնցուղ հաշվարկով:

6. Տուն-ինտերնատը պետք է ունենա հանգստի սենյակներ՝ յուրաքանչյուր 50 խնամվողի հաշվարկով՝ մեկ սենյակ:

7. Տուն-ինտերնատը պետք է ունենա առանձին սենյակ (մեկուսարան)՝ նոր ընդունված խնամվողներին առնվազն 3 օր առանձին պահելու և բժշկական զննության ենթարկելու նպատակով:

8. Հանգստի սենյակը պետք է ապահովված լինի բազմոցներով, բազկաթոռներով, սեղաններով, սեղանի խաղերով, աթոռներով՝ առնվազն 20

խնամվողի միաժամանակյա հանգստի և զբաղմունքի համար և առնվազն մեկ հեռուստացույցով:

9. Տուն-ինտերնատը պետք է ունենա մշակութային միջոցառումներ կազմակերպելու համար դահլիճ, որտեղ կտեղավորվի տուն-ինտերնատում խնամվողների թվի առնվազն 60 տոկոսը:

10. Խնամվողներին բժշկական կազմակերպություններ տեղափոխելու, մշակութային միջոցառումներին մասնակից դարձնելու, էքսկուրսիաների և այլ նպատակների համար յուրաքանչյուր տուն-ինտերնատ պետք է ունենա մեկ թեթև մարդատար ավտոմեքենա և յուրաքանչյուր 120 խնամվողի հաշվարկով՝ մեկ 12-14 տեղանոց միկրոավտոբուս, այդ թվում մեկ՝ հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխման համար հարմարեցված:

11. Շենքի ներքին կառուցվածքը պետք է հնարավորություն ընձեռի սայլակներով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող անձանց բնակության, ազատ տեղաշարժման և կենսագործունեության համար:

12. Տուն-ինտերնատը պետք է ունենա հեռախոսակապ՝ վարչական անձնակազմի համար առնվազն երկու կետ և յուրաքանչյուր 60 խնամվողի համար առնվազն մեկ հեռախոս, որը պետք է տեղադրված լինի խնամվողներին հասանելի վայրում:

13. Տուն-ինտերնատի սանիտարական պայմանները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջները:

14. Տուն-ինտերնատը պետք է ապահովված լինի հակահրդեհային անվտանգության պահպանման ավտոմատ համակարգով:

Նվազագույն չափորոշիչներ

բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատներում) խնամվողներին հատկացվող սննդամթերքի օրական օգտագործման

Հ/հ	Սննդամթերքի անվանումը	Չափման միավորը	Էներգետիկ արժեքը (կկալ)՝ 100 գրամի հաշվարկով	Օրական օգտագործման չափը (գրամներով) ընդհանուր տիպի տուն-ինտերնատի խնամվողների համար	Օրական օգտագործման չափը (գրամներով) հատուկ (մասնագիտացված) տուն-ինտերնատի խնամվողների համար
1.	Հացամթերք	գրամ	334	520	620
1.1	հաց ցորենի՝ բարձր կամ 1-ին տեսակի	գրամ		300	300
1.2	հաց ցորենի՝ 2-րդ տեսակի	գրամ		200	300
1.3	ալյուր ցորենի՝ բարձր կամ 1-ին տեսակի	գրամ		20	20
2.	Ընդեղեն, ձավարեղեն, մակարոնեղեն	գրամ	337	100	100
3.	Բանջարեղեն	գրամ	80	500	750

3.1	կարտոֆիլ	գրամ	80	200	400
4.	Մսամթերք(այդ թվում՝ թռչնամիս)	գրամ		150	150
4.1	տավարի միս	գրամ	168	100	100
5.	Ձկնամթերք	գրամ	144	50	60
6.	Կաթնամթերք		116	250	400
6.1	պանիր	գրամ	339	30	30
7.	Ձու	հատ	157	0.5	0.5
8.	Կարագ(յուղ՝ կենդանական, յուղ՝ բուսական)	գրամ	800	40	40
9.	Համեմունքներ	գրամ		30	30
10.	Հյութ	գրամ	60	100	100
11.	Միրգ	գրամ	45	200	200
12.	Չրեր	գրամ	234	3	2
13.	Մուրաբա, ջեմ, մեղր	գրամ	265	25	30
14.	Հրուշակեղեն	գրամ	330	50	40
15.	Շաքարավազ	գրամ	379	50	40

Նվազագույն չափորոշիչներ
սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում շահառուներին
հատկացվող սննդամթերքի

Հ/հ	Սննդամթերքի անվանումը	Օրական օգտագործման չափը (գրամներով)
1.	հաց	150
2.	պանիր	40
3.	շաքարավազ	50
4.	սուրճ	5
5.	թեյ	2
6.	կարագ	30
7.	մուրաբա, ջեմ, մեղր	25
8.	հրուշակեղեն	25
9.	մսամթերք	30

Նվազագույն չափորոշիչներ

բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատներում) խնամվողներին հագուստով և անկողնային պարագաներով ապահովելու

Հ/հ	Գույքի անվանումը	Չափման միավորը	Քանակը՝ մեկխնամվող իհաշվարկով	Օգտագործմանառավելագույն ժամկետը՝ տարիներով
1	2	3	4	5
	Կանացի հագուստ և ներքին սպիտակեղեն			
1.	Ձմեռային վերարկու կամ մուշտակ	հատ	1	6
2.	Աշնանային վերարկու, անձրևանոց,բաճկոն	հատ	1	5
3.	Շրջազգեստ	հատ	2	2
4.	Խալաթ	հատ	2	2
5.	Կիսաշրջազգեստ	հատ	1	2
6.	Սվիտր (բամբակյա)	հատ	1	1
7.	Շրջազգեստ (բրոյա)	հատ	1	2
8.	Տաք սվիտր կամ ժակետ	հատ	2	2

9.	Ներքին սպիտակեղեն	զույգ	3	1
10.	Գիշերային զգեստ (պիժամո)	հատ	1	1
11.	Գլխաշոր կամ գլխարկ (բրդյա)	հատ	1	3
12.	Գլխաշոր (բամբակյա)	հատ	1	1
13.	Ձեռնոց (բրդյա)	զույգ	1	4
14.	Կիսագուլպա	զույգ	4	1
15.	Գուլպա	զույգ	4	1
16.	Զուգագուլպա	հատ	4	1
17.	Թաշկինակ	հատ	4	1
	Տղամարդու հագուստ և ներքին սպիտակեղեն			
18.	Ձմեռային վերարկու կամ մուշտակ	հատ	1	6
19.	Աշնանային վերարկու, անձրևանոց, բաճկոն	հատ	1	5
20.	Կոստյում՝ բրդյա	հատ	1	2
21.	Կոստյում՝ բամբակյա	հատ	2	2
22.	Անդրավարտիք (բամբակյա)	հատ	2	1
23.	Բամբակյա վերնաշապիկ	հատ	3	1
24.	Տաք սվիտեր (բրդյա)	հատ	2	2
25.	Սպորտային համազգեստ	հատ	1	2
26.	Ներքին սպիտակեղեն	զույգ	5	1

27.	Գիշերային զգեստ (պիժամո)	հատ	1	1
28.	Ձմեռային գլխարկ	հատ	1	4
29.	Ձեռնոց (բրդյա)	զույգ	1	4
30.	Կիսագուլպա (բրդյա)	զույգ	4	1
31.	Կիսագուլպա (բամբակյա)	զույգ	5	1
32.	Փողկապ	հատ	1	5
33.	Թաշկինակ	հատ	5	1
34.	Գոտի(կաշվե)	հատ	2	3
	Կանացի և տղամարդու կոշիկներ			
35.	Ձմեռային կոշիկ	զույգ	1	2
36.	Ամառային կոշիկ	զույգ	1	1
37.	Հողաթափ (ամառային, ձմեռային)	զույգ	2	1
	Անկողնային պարագաներ			
38.	Սավան	հատ	2	1
39.	Ծրար	հատ	2	1
40.	Բարձի երես	հատ	2	1
41.	Վերմակ (բրդյա)	հատ	1	5
42.	Վերմակ (կիսաբրդյա)	հատ	1	4
43.	Անկողնու ծածկոց	հատ	1	8
44.	Ներքնակ	հատ	1	4
45.	Բարձ	հատ	1	5

46.	Սրբիչ բաղնիքի	հատ	1	1
47.	Սրբիչ երեսի	հատ	2	1

Նվազագույն չափորոշիչներ

Տուն-ինտերնատներում խնամվողների խնամքի համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի օգտագործման

Հ/հ	Սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի անվանումները	Չափման միավորը	Տարեկան պահանջվող քանակը 1 խնամվողի հաշվով
1.	Ատամի խոզանակ	հատ	4
2.	Ատամի մածուկ	հատ	6
3.	Զուգարանի թուղթ /100մ/	հատ	24
4.	Լվացվելու/լոզանքի/ օճառ	հատ	18
5.	Շամպուն	լիտր	2
6.	Տնտեսական օճառ	հատ	6
7.	Քիսա լոզանքի	հատ	1
8.	Սպունգ լոզանքի	հատ	2
10.	Սպունգ աման լվանալու	հատ	12
11.	Սպունգի սպիրալ	հատ	12
12.	Ռետինե ձեռնոց	զույգ	4
13.	Աման լվացող հեղուկ	լիտր	2.5
14.	Մաքրող փոշի	կգ	0,5
15.	Ժավել	լիտր	5
16.	Քլորամին	կգ	1.5

17.	Լվացքի փոշի ավտոմատ լվացքի մեքենաների համար	կգ	6
18.	Լվացքի փոշի ձեռքով լվացվող մեքենաների համար	կգ	4
19.	Անձեռոցիկ	տուփ	12
20.	Սանր	հատ	1
21.	Հատակի խոզանակ	հատ	0.1
22.	Հատակի փայտ	հատ	0.1
23.	Ավել սենյակի	հատ	2
24.	Ավել բակի	հատ	0,5
25.	Հոտազերծիչ /օդը թարմացնող, միջատասպան/	հատ	1
26.	Միջատասպան	հատ	0.1
	1 տղամարդու հաշվով		
27.	Սափրվելու մեկանգամյա ածելի	հատ	48
28.	Սափրվելու մածուկ	հատ	6
29.	Սափրվելու խոզանակ	հատ	2
	1 կնոջ հաշվով	Հատ	150
30.	Կանացի միջադիր	տուփ	12
	Անկողնային հիվանդների առկայության դեպքում		
31.	Տակդիր /փամփերս/	հատ	730
32.	Բժշկական պոլիէթիլենային թաղանթ	մետր	1,0

Նվազագույն չափորոշիչներ

տնային պայմաններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման

1. Տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման կարիք ունեցող տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձինք (այսուհետ՝ սպասարկվող) տնային խնամքի ծառայությունները ստանում են սոցիալական աջակցության տարածքային գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) տրամադրած անհատական սոցիալական ծրագրին (այսուհետ՝ անհատական ծրագիր) համապատասխան:

2. Տնային խնամք տրամադրող կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից սպասարկվող անձինք, ըստ իրենց առողջական վիճակի, կենսագործունեության սահմանափակման աստիճանի և սոցիալական պաշտպանության անհրաժեշտության, բաժանվում են երեք ենթախմբի՝

- 1) «Ա» ենթախումբ՝ կարիք ունի կողմնակի անձի պարբերական խնամքի.
- 2) «Բ» ենթախումբ՝ կարիք ունի կողմնակի անձի մասնակի խնամքի.
- 3) «Գ» ենթախումբ՝ կարիք ունի հիմնականում սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական օգնության:

3. Գործակալությունից ստացված ուղեգրի հիման վրա կազմակերպության սոցիալական աշխատողից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի կողմից իրականացված տնային այցելության արդյունքում կատարվում է սպասարկվողի կարիքների նախնական գնահատում, ինչի արդյունքում որոշվում է նրա նախնական ենթախումբը, այնուհետև կազմվում է հաշվառման քարտ և խնամքի ծառայությունների պլան (այսուհետ՝ պլան):

4. Յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, կազմակերպության սոցիալական աշխատողը տնային այցելության արդյունքում կատարում է սպասարկվողների կարիքների վերազնահատում, որի հիման վրա որոշում է կայացնում սպասարկվողի սպասարկման ենթախումբը պահպանելու կամ փոփոխելու վերաբերյալ՝ կազմելով սոցիալական սպասարկողների այցելությունների ժամանակացույցը և պատվիրակելով կազմակերպության բժշկի, բուժքրոջ, հոգեբանի և իրավախորհրդատուի ծառայությունները՝ հիմք ընդունելով ենթախմբի համար սահմանված և երաշխավորված ծառայությունների տեսակները և ծավալները, ինչպես նաև կատարում է համապատասխան նշումներ սպասարկվողի պլանում:

Տնային այցելությունների ժամանակացույցը հաստատում է կազմակերպության տնօրենը:

5. «Ա» ենթախմբում ընդգրկվում են ծերության նպաստ ստանալու իրավունքի տարիքին հասած և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, կողմնակի անձի պարբերական խնամքի կարիք ունեցող, կենսագործունեությունը մասնակի սահմանափակված, անկողնային հիվանդ անձինք:

6. «Ա» ենթախմբում ընդգրկված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման երաշխավորված ծառայությունների տեսակներն ու ծավալներն են՝

1) կենցաղային սպասարկում և խնամք, որը ներառում է սոցիալական սպասարկողի այցելություն, խնամքի ծառայությունների տրամադրում, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերում՝ ոչ պակաս, քան ամիսը 10-14 անգամ (այցելությունների հստակ քանակը և մատուցվող ծառայությունների տեսակները որոշվում են սոցիալական աշխատողի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքում).

2) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է բժշկի այցելություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ և բժշկի ցուցումով՝ ըստ անհրաժեշտության.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ըստ ներկայացված հայտի և սոցիալական աշխատողի այցելություն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.

4) խորհրդատվական օգնություն, որը ներառում է իրավախորհրդատուի այցելությունը՝ ըստ ներկայացված հայտի:

7. «Բ» ենթախմբում ընդգրկվում են ծերության նպաստ ստանալու իրավունքի տարիքին հասած և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, կողմնակի անձի մասնակի խնամքի կարիք ունեցող, կենսագործունեությունը մասամբ սահմանափակված անձինք:

8. «Բ» ենթախմբում ընդգրկված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման երաշխավորված ծառայությունների տեսակներն ու ծավալներն են՝

1) կենցաղային սպասարկում և խնամք, որը ներառում է սոցիալական սպասարկողի այցելություն, խնամքի տրամադրում՝ ամսական 6-8 անգամ (այցելությունների հստակ քանակը և մատուցվող ծառայությունների տեսակները որոշվում են սոցիալական աշխատողի կողմից կատարված կարիքի գնահատման արդյունքում).

2) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է բժշկի այցելություն՝ ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ և բժշկի ցուցումով՝ ըստ անհրաժեշտության.

3) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ըստ ներկայացված հայտի և սոցիալական աշխատողի այցելություն ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.

4) խորհրդատվական օգնություն, որը ներառում է իրավախորհրդատուի այցելությունը՝ ըստ ներկայացված հայտի:

9. «Գ» ենթախմբում ընդգրկվում են ծերության նպաստ ստանալու իրավունքի տարիքին հասած և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, կենսագործունեության ակներև սահմանափակում չունեցող, հիմնականում սոցիալ-հոգեբանական և խորհրդատվական օգնության կարիք ունեցող միայնակ անձինք:

10. «Գ» ենթախմբում ընդգրկված տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման երաշխավորված ծառայությունների տեսակներն ու ծավալներն են՝

1) բժշկական օգնություն և սպասարկում, որը ներառում է կանխարգելման նպատակով բժշկի այցելություն, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, ինչպես նաև բուժքրոջ այցելություն ամիսը մեկ անգամ՝ բժշկի ցուցումով ըստ անհրաժեշտության.

2) սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության, սոցիալական աշխատողի այցելություն ամիսը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.

3) խորհրդատվական օգնություն, որը ներառում է իրավախորհրդատուի այցելությունը՝ ըստ ներկայացված հայտի:

Նվազագույն չափորոշիչներ

ընդհանուր տիպի տուն-ինտերնատում խնամվողների առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների

1. Տուն-ինտերնատները պետք հարմարեցված լինեն հաշմանդամություն ունեցող, մասնավորապես՝ տեղաշարժման կարողության սահմանափակումներ ունեցող կամ սայլակից օգտվող անձանց բնակության ու անխոչընդոտ կենսագործունեության համար (թեքահարթակների, սենյակների դռների, սանհանգույցների և ֆիզիկական մատչելիության ապահովման այլ գործիքների առկայությունը):

2. Տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց ընդհանուր տիպի տուն-ինտերնատ ընդունելիս և սենյակներում տեղավորելիս հաշվի է առնվում նրանց տարիքը, սեռը, առողջական վիճակը, հիվանդության բնույթը, ինքնասպասարկման կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամության տեսակը, նախասիրությունները, նույն սենյակում միասին բնակվողների ընդհանուր հետաքրքրությունները, ինչպես նաև անձնային և հոգեբանական այլ հատկանիշներ:

3. Տուն-ինտերնատում խնամվողների կարիքների գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից հաստատված՝ ինքնասպասարկման կարողությունների գնահատման չափորոշիչներին համապատասխան տուն-ինտերնատի բժշկի, հոգեբանի և սոցիալական աշխատողի կողմից խնամվողների հետ հարցազրույցների և սեփական մասնագիտական դիտարկումների միջոցով:

4. Խնամվողներն ըստ իրենց առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների բաժանվում են երեք խմբի՝ առաջին, երկրորդ և երրորդ:

5. Խնամվողները տուն-ինտերնատում տեղավորվում են ըստ խմբերի՝ տուն-ինտերնատում համապատասխան հնարավորության և պայմանների առկայության դեպքում՝ առանձին բաժանմունքներում կամ նման հնարավորության բացակայության դեպքում՝ առանձին սենյակներում:

6. Առաջին խմբում ընդգրկված խնամվողներն ունեն շուրջօրյա մշտական խնամքի կարիք: Այս խմբում ընդգրկված անձինք, տուն-ինտերնատում անկողնային հիվանդների համար նախատեսված հատուկ բաժանմունքի առկայության դեպքում, պարտադիր տեղավորվում են այդ բաժանմունքում, իսկ եթե տուն-ինտերնատը չունի հատուկ անկողնային խնամքի բաժանմունք, ապա նրանք տեղավորվում են առանձին սենյակներում՝ հնարավորինս բուժառայությանը մոտ, խնամքը պատշաճ կազմակերպելու նպատակով:

7. Առաջին խմբում ընդգրկված խնամվողներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- 1) ամենօրյա բուժզննում, բժշկի համայց.
- 2) բուժքրոջ ամենօրյա այցելություն, բժշկի նշանակումների կատարում.
- 3) միանվագ օգտագործման տակդիրների օրը երեք անգամյա և ըստ անհրաժեշտության՝ փոխում, ներքնաշորերի ամենօրյա փոխում.
- 4) անկողնային սպիտակեղենի փոխում շաբաթը՝ երեք անգամ և ըստ անհրաժեշտության.
- 5) սնվելը՝ տեղում (անհրաժեշտության դեպքում՝ կերակրողի օգնությամբ).
- 6) լոգանքի կազմակերպում շաբաթը երկու անգամ և ըստ անհրաժեշտության.
- 7) սոցիալական աշխատողի և հոգեբանի օգնության կամ խորհրդատվության ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան՝ շաբաթը մեկ անգամ.
- 8) ինքնուրույն տեղաշարժման կարողություն չունեցող անձանց՝ ուղեկցման ծառայություններ.
- 9) վերականգնողական պարագաների կարիք ունեցողներին համապատասխան պարագաներով ապահովման գործընթացի կազմակերպում.
- 10) բժշկի նշանակմամբ ֆիզիոթերապևտիկ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ մերսում, բուժական ֆիզկուլտուրա և այլն:

8. Երկրորդ խմբում ընդգրկված խնամվողներն ունեն մասնակի, ոչ մշտական խնամքի կարիք: Երկրորդ խմբում ընդգրկված խնամվողներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- 1) ամենօրյա բուժզննում, բժշկի համայց.
- 2) բուժքոչ այցելություն ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան՝ շաբաթական երկու անգամ.
- 3) միանվագ օգտագործման տակդիրների փոխում՝ ըստ անհրաժեշտության, ներքնաշորերի ամենօրյա փոխում.
- 4) անկողնային սպիտակեղենի փոխում՝ շաբաթը երկու անգամ.
- 5) սնվելը՝ կարող է լինել տեղում (ըստ բժշկի ցուցման).
- 6) լոգանքի կազմակերպում շաբաթը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.
- 7) սոցիալական աշխատողի և հոգեբանի օգնության և խորհրդատվության ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ.
- 8) ինքնուրույն տեղաշարժման կարողություն չունեցող անձանց ուղեկցման ծառայություններ.
- 9) վերականգնողական պարագաների կարիք ունեցողներին համապատասխան պարագաներով ապահովման ծառայություններ.
- 10) կազմակերպվող տարբեր միջոցառումների մասնակցության ապահովում՝ ըստ խնամվողի ցանկության.
- 11) բժշկի նշանակմամբ ֆիզիոթերապևտիկ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ մերսում, բուժական ֆիզկուլտուրա և այլն.
- 12) խնամվողների ցանկությամբ և բժշկի ցուցումով՝ աշխատանքային թերապիայի որևէ տեսակով զբաղվելու:

9. Երրորդ խմբում ընդգրկված խնամվողներն ունեն մասնակի խնամքի կարիք, նրանց ինքնասպասարկման կարողությունը համարյա ամբողջությամբ պահպանված է: Երրորդ խմբում ընդգրկված խնամվողներին տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- 1) բուժզննում՝ շաբաթը մեկ անգամ.
- 2) բուժքոչ այցելություն՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան՝ շաբաթը մեկ անգամ.
- 3) անկողնային սպիտակեղենի փոխում՝ շաբաթը մեկ անգամ.
- 4) հոգեբանի և սոցիալական աշխատողի խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության.
- 5) սնվելը՝ ճաշարանում.
- 6) լոգանքը կազմակերպվում և անկողնային սպիտակեղենը փոխվում է շաբաթը մեկ անգամ.

7) բժշկի նշանակմամբ ֆիզիոթերապևտիկ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ մերսում, բուժական ֆիզկուլտուրա և այլն.

8) մասնակցություն կազմակերպվող տարբեր միջոցառումների, այդ թվում՝ հաստատությունից դուրս.

9) մասնակցություն աշխատանքային թերապիայի:

Նվազագույն չափորոշիչներ

հատուկ (մասնագիտացված) հաստատություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող խնամվողների առողջական և հոգեբանական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների

1. Հատուկ (մասնագիտացված) հաստատություն (տուն-ինտերնատ, խնամքի կենտրոն, խնամքի տուն) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք տեղավորվում են իրենց առողջական և հոգեբանական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հրամանով հաստատված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարիքների գնահատման մեթոդաբանության և չափորոշիչների: Ըստ այդմ՝ առանձնացվում են երեք խումբ՝ Ա, Բ, Գ, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի:

2. «Ա» խմբի մեջ ընդգրկվում են կայուն հոգեկան վիճակ, առավել պահպանված հմտություններ և համայնքային խնամքի տներում ապրելու կարողություններ ունեցող անձիք:

3. «Ա» խումբը բաժանվում է 4 ենթախմբի՝ Ա1, Ա2, Ա3 և Ա4, որոնցից երկուսում ընդգրկվում են մտավոր խնդիրներ ունեցող անձինք, մյուս երկուսում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք. մասնավորապես՝

1) «Ա1» ենթախմբում ընդգրկվում են մտավոր խնդիրներ ունեցող անձիք՝ գրեթե ամբողջությամբ պահպանված կարողություններով, որոնց հոգեկան և ֆիզիկական առողջության վիճակը, պահպանված սոցիալական, կենցաղային և

հաղորդակցման հմտությունները, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը թույլ են տալիս ապրել 3-8 հոգու համար նախատեսված համայնքային խնամքի տներում.

2) «Ա2» ենթախմբում ընդգրկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք՝ գրեթե ամբողջությամբ պահպանված կարողություններով, որոնց հոգեկան և ֆիզիկական առողջության վիճակը, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը թույլ են տալիս ապրել 3-8 հոգու համար նախատեսված համայնքային խնամքի տներում.

3) «Ա3» ենթախմբում ընդգրկվում են մտավոր խնդիրներ ունեցող անձիք, որոնց սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները հիմնականում կամ մասամբ պահպանված են, և հոգեկան ու ֆիզիկական առողջության վիճակը, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը թույլ են տալիս ապրել 9-16 հոգու համար նախատեսված համայնքային խնամքի տներում.

4) «Ա4» ենթախմբում ընդգրկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք, որոնց սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները հիմնականում կամ մասամբ պահպանված են, և հոգեկան ու ֆիզիկական առողջության վիճակը, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը թույլ են տալիս ապրել 9-16 հոգու համար նախատեսված համայնքային խնամքի տներում.

4.«Բ» խմբում ընդգրկվում են սահմանափակ կարողություններով՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք, որոնք ունեն շուրջօրյա խնամքի և հսկողության, ինչպես նաև սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունների զարգացման ու վերականգնման կարիք:

5. «Բ» խումբը բաժանվում է երկու ենթախմբի՝ «Բ1» և «Բ2», առաջինում ընդգրկվում են մտավոր, իսկ երկրորդում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, մասնավորապես՝

1) «Բ1» ենթախմբում ընդգրկվում են մտավոր խնդիրներ ունեցող անձիք, որոնց մտավոր ու ֆիզիկական առողջության վիճակով պայմանավորված՝ սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը հիմնականում

սահմանափակ են, և նրանք ունեն շուրջօրյա խնամքի և հսկողության, ինչպես նաև սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունների զարգացման ու վերականգնման կարիք: Այս խմբում ընդգրկված անձինք կարող են խնամվել շուրջօրյա խնամքի համապատասխան կենտրոններում:

2) «Բ2» ենթախմբում ընդգրկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք, որոնց հոգեկան ու ֆիզիկական առողջության վիճակով պայմանավորված՝ սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը հիմնականում սահմանափակ են, և նրանք ունեն շուրջօրյա խնամքի և հսկողության, ինչպես նաև սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունների զարգացման ու վերականգնման կարիք: Այս խմբում ընդգրկված անձինք կարող են խնամվել շուրջօրյա խնամքի համապատասխան կենտրոններում:

6. «Գ» խմբում ընդգրկվում են խիստ սահմանափակ կամ իսպառ բացակայող կարողություններով՝ հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք, որոնք ունեն շուրջօրյա հատուկ խնամքի և մշտական հսկողության կարիք:

7. «Գ» խումբը բաժանվում է 2 ենթախմբի՝ Գ1 և Գ2, որոնցից առաջինում ընդգրկվում են մտավոր, երկրորդում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք. մասնավորապես՝

1) «Գ1» ենթախմբում ընդգրկվում են մտավոր խնդիրներ ունեցող անձիք, որոնց մտավոր ու ֆիզիկական առողջության վիճակով պայմանավորված՝ սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը խիստ սահմանափակ է կամ իսպառ բացակայում է: Այս խմբում ընդգրկված անձինք ունեն շուրջօրյա հատուկ խնամքի և հսկողության, ինչպես նաև սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունների զարգացման ու վերականգնման կարիք: Այս խմբում ընդգրկված անձինք կարող են խնամվել շուրջօրյա խնամքի հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատ):

2) «Գ2» ենթախմբում ընդգրկվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձիք, որոնց հոգեկան ու ֆիզիկական առողջության վիճակով պայմանավորված՝ սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունները, ինքնասպասարկման ունակությունները և սեփական վարքը վերահսկելու կարողությունը խիստ սահմանափակ է կամ իսպառ բացակայում է: Այս խմբում ընդգրկված անձինք ունեն

շուրջօրյա հատուկ խնամքի և հսկողության, ինչպես նաև սոցիալական, կենցաղային և հաղորդակցման հմտությունների զարգացման ու վերականգնման կարիք: Այս խմբում ընդգրկված անձինք կարող են խնամվել շուրջօրյա խնամքի հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատ):

8. «Ա» խմբում ընդգրկված անձինք, բնակվում են համայնքային խնամքի տներում: «Ա» խմբի տարբեր ենթախմբերին պատկանող անձինք խնամքի տանը տեղավորվում են առանձին բաժանմունքներում (առկայության դեպքում) կամ սենյակներում, հատկապես հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձինք պարտադիր սպասարկվում են առանձին: Այս խմբին պատկանող անձանց տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

1) խնամքի տան խնամվողներին հոգեբուժական օգնություն է տրամադրվում և նրանց նկատմամբ դիսպանսեր հսկողություն է իրականացվում խնամքի տան գտնվելու վայրի տարածքային սպասարկման պոլիկլինիկայի կամ մասնագիտացված հոգեբուժական կազմակերպության հոգեբույժի կողմից ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը՝ երկու անգամ.

2) հոգեբանի և սոցիալական աշխատողի խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության.

3) սնվում են ճաշարանում՝ բացառությամբ, երբ սնունդը՝ համաձայն բժշկի ցուցման, տարվում է խնամվողի սենյակ, ինչպես նաև խնամքի տան կանոններով սահմանված այլ դեպքերի.

4) լոգանքը կազմակերպվում և հագուստը, սպիտակեղենն ու անկողնային պարագաները փոխվում են խնամքի տան կանոններով սահմանված պարբերականությամբ և օրվա ռեժիմին համապատասխան, բայց ոչ պակաս, քան շաբաթական առնվազն մեկ անգամ.

5) բժշկի կողմից իրականացվում է ամենօրյա բուժզննություն, կազմակերպում է այնտեղ խնամվող անձանց առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ խնամքի տան գտնվելու վայրի տարածքային սպասարկման պոլիկլինիկայի միջոցով: Շուրջօրյա խնամքի տան բժիշկն ապահովում է խնամվող անձանց նկատմամբ բժշկական հսկողության իրականացումը՝ նրանց այնտեղ բնակվելու (խնամվելու) ամբողջ ժամանակահատվածում, և, անհրաժեշտության դեպքում, աջակցում է համապատասխան հիվանդանոցային բժշկական կազմակերպություններ նրանց ուղեգրման գործընթացին.

6) խնամվող անձանց տրամադրվում է խորհրդատվական օգնություն, ըստ անհրաժեշտության, ապահովվում է իրավական օգնության տրամադրումը.

7) խնամքի տանը խնամվող անձանց համար կազմակերպվում են մարզական, մշակութային միջոցառումներ, մրցույթներ, էքսկուրսիաներ, ինչպես նաև

խնամվողների ինքնօգնության խմբեր, երգի, պարի, նկարչության, կարուձևի և այլ խմբակներ.

8) խնամվողն իր ցանկությամբ և ըստ անհրաժեշտության, մասնակցում է շուրջօրյա խնամքի տան համար անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների, մթերքի և դեղերի գնման գործընթացին.

9) խնամվողների կենցաղային հմտությունների և ինքնուրույնության զարգացման նպատակով, խնամվողները սոցիալական սպասարկողի անմիջական հսկողությամբ և իրենց ցանկությամբ կատարում են պարզ, կենցաղային բնույթի աշխատանքներ՝ խնամքի տան տնտեսության վարմանն առնչվող գործառույթներ, մասնավորապես՝ սպասքը հավաքելու և լվանալու, խնամքի տան և իրենց սենյակների մաքրության, անկողնու հավաքման և այլ աշխատանքներ.

10) խնամվողները ներգրավվում են աշխատանքային թերապիայի տարբեր տեսակների պարապմունքներին:

9. «Բ» խմբում ընդգրկված անձինք, բնակվում են համապատասխան խնամքի կենտրոններում, որտեղ նրանց տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

1) ամենօրյա բուժզննում, հոգեբույժի այց և խորհրդատվություն՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան՝ շաբաթը մեկ անգամ.

2) միանվագ օգտագործման տակդիրների և ներքնաշորերի փոխում՝ ըստ անհրաժեշտության.

3) անկողնային սպիտակեղենի փոխում շաբաթը՝ երկու անգամ.

4) սնվելը հիմնականում՝ ճաշարանում, սակայն կարող է լինել նաև տեղում՝ բժշկի ցուցումով.

5) լոգանքի կազմակերպում շաբաթը մեկ անգամ և ըստ անհրաժեշտության.

6) սոցիալական աշխատողի և հոգեբանի օգնության և խորհրդատվության ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան՝ շաբաթը մեկ անգամ.

7) ինքնուրույն տեղաշարժման կարողություն չունեցող անձանց ուղեկցման ծառայություններ.

8) վերականգնողական պարագաների կարիք ունեցողներին համապատասխան պարագաներով ապահովման ծառայություններ.

9) կազմակերպվող տարբեր միջոցառումների մասնակցության ապահովում՝ ըստ խնամվողի ցանկության և բժշկական ցուցման.

10) բժշկի նշանակմամբ ֆիզիոթերապևտիկ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ բուժական ֆիզկուլտուրա.

11) ըստ խնամվողի նախասիրության և բժշկական ցուցման՝ մասնակցություն աշխատանքային թերապիայի պարապմունքներին:

10. «Գ» խմբում ընդգրկված անձինք, բնակվում են շուրջօրյա խնամքի հատուկ (մասնագիտացված) հաստատություններում (տուն-ինտերնատ), որտեղ նրանց տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

1) ամենօրյա բուժզննում, այդ թվում՝ հոգեբույժի կողմից.

2) սոցիալական աշխատողի, հոգեբանի և սոցիալական սպասարկողի ամենօրյա հսկողություն.

3) բուժքրոջ և սոցիալական սպասարկողի կողմից՝ ուղեկցման ծառայություններ.

4) միանվագ օգտագործման տակդիրների օրը երեք անգամյա և ըստ անհրաժեշտության՝ փոխում, ներքնաշորերի ամենօրյա փոխում.

5) անկողնային սպիտակեղենի փոխում շաբաթը՝ երեք անգամ և ըստ անհրաժեշտության.

6) սնվելը՝ տեղում (անհրաժեշտության դեպքում՝ կերակրողի օգնությամբ).

7) լոգանքի կազմակերպում շաբաթը երկու անգամ և ըստ անհրաժեշտության.

8) սոցիալական աշխատողի և հոգեբանի օգնության կամ խորհրդատվության ծառայություններ՝ ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս շաբաթը մեկ անգամից.

9) ինքնուրույն տեղաշարժման կարողություն չունեցող անձանց՝ ուղեկցման ծառայություններ.

10) վերականգնողական պարագաների կարիք ունեցողներին համապատասխան պարագաներով ապահովման ծառայություններ.

11) բժշկի նշանակմամբ ֆիզիոթերապևտիկ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ բուժական ֆիզկուլտուրա.

12) աշխատանքային թերապիայի մասնակցություն՝ ըստ խնամվողի նախասիրության և բժշկական ցուցման:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՓՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 730-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԻԾ) ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշման 6.1-ին կետի ա. ենթակետով տրված հանձնարարականից և նպատակ ունի բարձրացնել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայությունների որակը և արդյունավետությունը, ինչպես նաև դրանց տրամադրման համար անհրաժեշտ չափորոշիչները մեկտեղել մեկ իրավական ակտում, ինչը կոյուրացնի չափորոշիչների կիրառումը համապատասխան հաստատություններում:

Գործող՝ ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների գործնականում կիրարկման ուսումնասիրության և վերլուծության արդյունքում, Նախագծով վերանայվել են որոշ չափորոշիչներ՝ կատարվել են ինչպես չափորոշիչների ավելացումներ, այնպես էլ՝ նվազեցումներ:

Միաժամանակ, Նախագծում ընդգրկվել են որոշ ապրանքների կամ ծառայությունների չափորոշիչներ, որոնք մինչ այդ սահմանված չէին, կամ սահմանված էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի համապատասխան հրամաններով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկա դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության տուն-ինտերնատները, ինչպես նաև նախարարության հետ սուբսիդիայի պայմանագրեր կնքած կազմակերպությունները տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ տրամադրելիս ղեկավարվում են ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշմամբ հաստատված նվազագույն չափորոշիչներով, մասնավորապես՝ բնակելի տարածքով ապահովվածության, սննդի, հագուստի, անկողնային պարագաների և տնային պայմաններում կենսաթոշակառուների սոցիալական սպասարկման: Նշված որոշմամբ սահմանված չեն խնամվողներին անհրաժեշտ սանիտարահիգիենիկ և մաքրիչ նյութերի (վերջինս սահմանված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով), տնային այցելությունների համար վճարվող գումարի (չնայած փաստացի այն վճարվում է), առանձնացված սենյակի (մեկուսարանի) առկայության, ավտոմեքենաների քանակի, ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) տուն-ինտերնատներում խնամվողների առողջական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների նվազագույն չափորոշիչները, որոնք սահմանված են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տարբեր հրամաններով:

Վերջին տարիներին տուն-ինտերնատներից պարբերաբար ստացվել և ստացվում են առաջարկություններ՝ գործող չափորոշիչները (սննդի, հագուստի) վերանայելու վերաբերյալ:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Սույն Նախագծի ընդունման նպատակն է հաստատել տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի համար անհրաժեշտ՝ առավել ամբողջական ծառայությունների և ապրանքատեսակների նվազագույն չափորոշիչներ և տարբեր իրավական ակտերով սահմանված չափորոշիչները մեկտեղել մեկ որոշման մեջ: Մասնավորապես, սույն Նախագիծը մշակելիս, հաշվի են առնվել տուն-ինտերնատների աշխատողների և խնամվողների կարծիքները, ուսումնասիրվել է ԱՊՀ երկրներում ընդունված նմանատիպ չափորոշիչները: Արդյունքում որոշվել է ուժը կործրած ճանաչել ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N730-Ն որոշումը և սույն Նախագծում սահմանել բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունների (տուն-ինտերնատների) գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր և բնակելի

տարածքի, կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության պահպանման նվազագույն չափորոշիչները, սննդամթերքի, հագուստի, կոշիկերի, անկողնային պարագաների վերանայված, սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի օգտագործման նվազագույն չափորոշիչները, ինչպես նաև վերանայվել են տնային պայմաններում տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները:

Նախագծով սահմանվել են ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) տուն-ինտերնատներում խնամվողների առողջական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման վրա մատուցվող ծառայությունների նվազագույն չափորոշիչները:

Նախարարության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ տուն-ինտերնատների խնամվողները դժգոհում են և բավարարված չեն իրենց տրամադրվող հագուստի ինչպես քանակից, այնպես էլ տրամադրման ժամկետներից: Խնամվողների դժգոհություններին համամիտ են եղել նաև տուն-ինտերնատների աշխատողները, որոնք կոնկրետ ապրանքատեսակի մասով փաստացի օրինակներ են բերել, որ տվյալ հագուստը հնարավոր չէ կրել երկու տարի և այլն: Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ հիմնականում խնամվողների դժգոհություններն ու արված առաջարկությունները իրատեսական են, ուստի ելնելով խնամվողների շահերից և նրանց մաքուր ու խնամված տեսք ունենալու, ինչպես նաև անձնական հիգիենայի նորմերի պահպանման անհրաժեշտությունից, նպատակահարմար է վերանայել տրամադրվող որոշ ապրանքատեսակների քանակները և օգտագործման ժամկետները:

Ոսումնասիրությունից պարզվել է նաև, որ հագուստի որոշ անհրաժեշտ տեսակներ ընդհանրապես ներառված չեն եղել չափորոշիչներում, օրինակ՝ գիշերանոց, զուգագուլպա, սրբիչ:

Սույն Նախագծով, գործող չափորոշիչների համեմատ, մասնավորապես ավելացվել են տուն-ինտերնատներում խնամվողներին տրամադրվող հագուստի որոշ տեսակների և ներքին սպիտակեղենի քանակները, ինչպես նաև վերանայվել անկողնային պարագաների՝ ներքնակների, վերմակների օգտագործման ժամկետները՝ դրանց տրամադրման պարբերականությունը կրճատելու առումով: Որոշ

ապրանքատեսակների քանակները նվազեցվել են կամ օգտագործման ժամկետներն են երկարացվել, քանի որ դրանք տարեցների շրջանում նվազ պահանջարկ ու կարևորություն ունեն:

Գործող որոշմամբ հաստատված 40 անուն ապրանքատեսակներից վերանայվել է գործող 19 չափորոշիչ, այդ թվում՝ 9 ապրանքատեսակի քանակ ավելացվել է, 10 ապրանքատեսակի օգտագործման ժամկետները փոխվել են՝ 5-ը կրճատվել է, իսկ 5-ը՝ երկարացվել, ընդհանրապես հանվել է մեկ ապրանքատեսակ (կանացի բամբակյա գոտի, որի կարիքը, ըստ խնամվողների՝ չկա), ցանկը լրացվել է նոր 6 ապրանքատեսակ (կանացի և տղամարդու գիշերազգեստ, սպորտային կոստյում, երեսի և բաղնիքի սրբիչ ու զուգագուլպա), բացի այդ առանձնացվել են նաև գործող չափորոշիչներում ներառված մի քանի անուն հագուստ՝ շրջազգեստ, խալաթ, կիսաշրջազգեստ և բամբակյա սվիտեր, որոնք գրված էին մեկ տողով և մեկ քանակով, ինչը, բնականաբար օբյեկտիվորեն բավարար չէր և սույն Նախագծով առանձնացվել են նշված ապրանքատեսակները, քանի որ դրանցից որևէ մեկը չի կարող փոխարինել մյուսին:

Բացի այդ, խնամքի համար անհրաժեշտ չափորոշիչները ամբողջականացնելու նպատակով, սահմանվել է նաև պարտադիր պայման՝ հաստատությունում նոր ընդունված խնամվողներին առնվազն 3 օր առանձին պահելու և բժշկական զննության ենթակելու նպատակով առանձնացված սենյակ (մեկուսարան) ունենալու, ինչն անհրաժեշտ է վարակիչ հիվանդությունները կանխարգելելու համար:

Սահմանվել է նաև տուն-ինտերնատներին հատկացվող ավտոմեքենաների քանակը՝ թեթև մարդատար, միկրոավտոբուս և հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխման համար հարմարեցված միկրոավտոբուս, ինչը անհրաժեշտ է խնամվողներին ամբուլատոր և ստացիոնար բուժհաստատություններ տեղափոխելու (հատկապես մարզերում գտնվող տուն-ինտերնատներից՝ Երևան), պատմական և մշակութային օջախներ, էքսկուրսիաներ տանելու և այլ նպատակներով:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հինգ տուն-ինտերնատի խնամվողներից (ընդհանուր թիվը՝ 1210) 2015թ. ընթացքում ստացիոնար բուժհաստատություն է տեղափոխվել շուրջ 400 խնամվող (որոնց անհրաժեշտ է տանել, ետ բերել և ընթացքում այցելել), ևս 900-ը ստացել են բժշկական օգնություն՝ ամբուլատոր պայմաններում (այն մասնագետների մոտ, որոնք տուն-ինտերնատում չկան և այն դեպքերում, երբ հնարավոր չէ բուժումը կազմակերպել տուն-ինտերնատում): Բացի այդ, յուրաքանչյուր կազմակերպություն տարվա մեջ առնվազն 4-5 անգամ կազմակերպում է այցելություններ մշակույթի օջախներ, ինչպես նաև էքսկուրսիաներ՝ բնության գիրկ, Սևանի ափ և այլն:

2015 թ. ընթացքում նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններում իրականացվել է տրանսպորտային միջոցների շահագործման ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում առաջարկվել է սույն չափորոշիչը:

Նախագծով սահմանվել է տուն-ինտերնատներում անհրաժեշտ հեռախոսակապի չափորոշիչ, սահմանվել է նաև, որ տուն-ինտերնատը պետք է ապահովված լինի հակահրդեհային անվտանգության պահպանման ավտոմատ համակարգով, որը շատ կարևոր է դժբախտ պատահարներից խուսափելու համար:

Սույն Նախագծում վերանայվել են սննդամթերքի գործող չափորոշիչները՝ խնամվողներին հատկացվող սննդամթերքի որոշ տեսակներ ավելացվել են, որոշ տեսակներ՝ նվազեցվել: Փոփոխությունները կատարվել են հաշվի առնելով տուն-ինտերնատների վերջին մի քանի տարվա փաստացի կատարած գնումների և մթերքների սպառումների ծավալները, խնամվողների կարծիքները, ինչպես նաև ԱՊՀ երկրների նույնատիպ հաստատությունների սննդամթերքի չափորոշիչները:

Մասնավորապես, ավելացվել են մսամթերքի, չոր մրգերի (վերջինը նախկինում ընդհանրապես չի եղել), ձավարեղենի ու մակարոնեղենի օգտագործման չափորոշիչները, նվազեցվել են շաքարավազի, ձկնամթերքի ու կաթնամթերքի չափորոշիչները:

Սննդի չափորոշիչների փոփոխության արդյունքում պահպանվել է մեկ խնամվողի օրական սննդի օգտագործման էներգետիկ արժեքը:

Գործող չափորոշիչների համեմատ Նախագծով սահմանվել են տնային պայմաններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման և սոցիալական սպասարկման նոր՝ փոփոխված չափորոշիչներ (վերանայվել են շահառուների ենթախմբերը), որը կատարվել է «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված առաջարկության հիման վրա, հիմք ընդունելով տարեցների գնահատված կարիքներին համապատասխան փաստացի մատուցվող ծառայությունների տեսակներն ու ծավալը:

Նախագծում ներառվել են նոր չափորոշիչներ՝ կապված տուն-ինտերնատներում խնամվողների առողջական վիճակի և ինքնասպասարկման կարողությունների, հոգեբանական վիճակի, սոցիալական հմտությունների, ինքնասպասարկման ունակությունների և սեփական վարքը վերահսկելու կարողության գնահատման հիման

վրա մատուցվող ծառայությունների հետ: Այս չափորոշիչները ևս հաստատված են նախարարի հրամանով:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ կամբողջացվեն և կմիասնականացվեն տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքի համար անհրաժեշտ բոլոր ծառայությունները, որոնց գործնական կիրառումը կնպաստի հաստատություններում խնամվողների գնահատված կարիքներին համապատասխան մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ)ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 730-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՆՈՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԿԱՏԱՐԵԼՈՒԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆՄԱՍԻՆ

«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N730-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման կամ նոր իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ)ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 730-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ պետական բյուջեում նախատեսվում է ծախսերի էական ավելացում, մասնավորապես՝ չափորոշիչներին համապատասխան ավտոմեքենաների ձեռքբերման (առկա 12 ավտոմեքենայի փոխարեն առաջարկվում է 15-ը) և տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման համար լրացուցիչ կպահանջվի 3 777.8 հազ դրամ, հեռախոսակապի համար (առկա 24-ի փոխարեն առաջարկվում է 31-ը) լրացուցիչ՝ 776.2 հազ.դրամ, սանիտարահիգիենիկ պարագաների և մաքրիչ նյութերի ձեռքբերման համար լրացուցիչ պահանջվում է 198 703.3 հազ. դրամ (համաձայն առաջարկվող չափորոշիչի՝ 264 267.4 հազ. դրամ, սակայն պետական բյուջեից հատկացվում է 65 564.1 հազ. դրամ, որը չի ծածկում նույնիսկ ներկա դրությամբ գործող չափորոշիչներով նախատեսված պահանջարկը):

Այսպիսով, սույն որոշման ընդունմամբ, ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ կպահանջվի ընդամենը 203 257.3 հազ դրամ: